ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ *0811.03.5 «ՋԵՐՄԱՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ»* ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ *0811.03.01.5 «ՏԵԽՆԻԿ-ԱԳՐՈՆՈՄ»* ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Միջին մասնագիտական կրթության **0811.03.5 «Ջերմատնային տնտեսություն»** մասնագիտության **0811.03.01.5 «Տեխնիկ-ագրոնոմ»** որակավորման մասնագետի մասնագիտական գործունեության բնութագիրը տրվում է ըստ զբաղմունքների տեսակների և մասնագիտական պարտականությունների:

2. Միջին մասնագիտական կրթության **0811.03.5 «Ջերմատնային տնտեսություն»** մասնագիտությամբ **0811.03.01.5 «Տեխնիկ-ագրոնոմ»** որակավորմամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունքները՝

ա) ջերմատնային տնտեսության ագրոնոմ,

բ) ջերմատնային տնտեսության տեղամասի վարպետ:

3. Միջին մասնագիտական կրթության **0811.03.5 «Ջերմատնային տնտեսություն»** մասնագիտությամբ **0811.03.01.5 «Տեխնիկ-ագրոնոմ»** որակավորմամբ մասնագետի մասնագիտական պարտականություններն են.

1)մշակաբույսի պահանջներին համապատասխան գնահատել հողի որակը,

2) կազմել ցանքաշրջանառության սխեմաներ,

3) կազմակերպել հողի նախացանքային մշակությունը,

4) կազմել ագրոտեխնիկական աշխատանքների ժամանակացույցեր,

5) մասնակցել ջերմատան տարածքի օգտագործման նախագծմանը,

6) հսկել ջերմատնային տնտեսության միկրոկլիմայի ռեժիմների պահպանությունը,

7) ապահովել ագրոտեխնիկական աշխատանքների ժամանակին կատարումը,

8) պայքարել հողի և բույսերի հիվանդությունների ու վնասատուների դեմ,

9) կիրառել օրգանական գյուղատնտեսության ձեռքբերումները,

10) կազմակերպել բերքահավաքի աշխատանքները,

11) կազմակերպել մշակաբույսերի ցանքի և սածիլման աշխատանքները,

12) վարել անհրաժեշտ փաստաթղթային տնտեսությունը,

13) կազմակերպել հողախառնուրդների պատրաստումը,

14) իրականացնել հողաբարելավման աշխատանքներ,

15) հրահանգավորել աշխատողներին, հսկել նրանց աշխատանքը,

16) ապահովել աշխատանքի անվտանգության կանոնների պահպանումը: